ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մարտի 2013 թվականի թիվ 38 - Ա

ԻՋԵՎԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-ԻՆ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ -728 հրամանագրի 1.6-րդ կետով, համաձայն Տավուշի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2013թ հիմնական միջոցառումների պլանի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ

1.2013թ ապրիլի 12-ին Իջևանի բժշկական կենտրոնում անց կացնել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն <<Խոլերայի օջախի վերացմանն ուղղված միջոցառումների իրականացումը>> թեմայով:

2.ՈՒսումնավարժությանը մասնակից դարձնել.
1/ ՀՀ Տավուշի մարզպետարանին,
2/Մարզային փրկարարական վարչությանը,
3/ Իջևանի բժշկական կենտորնին,
4/ ՀՀՏ Տավուշի մարզային փորձագիտական կենտրոնին:

ՈՒսումնավարժության պատշաճ մակարդակով նախապատրաստվելու և անցկացնելու նպատակով

3.Մարզային փրկարարական վարչության պետին՝
1/Ճշտել և լրամշակել գործող պլանային փաստաթղթերը,
2/ Պատրաստ վիճակի բերել կառավարման կապի և ազդարարման համակարգերը:
4.Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովման վարչության պետին՝
1/ Ճշտել և լրամշակել գործող պլանային փաստաթղթերը,
2/ Կազմակերպել ընդգրկվող բուժ հիմնարկների համալրումը անձնակազմով, տեխնիկայով, գույքով, անցկացնել պարապմունքներ:

5.ՈՒսումնավարժության ղեկավար նշանակել մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ փոխգնդապետ Վ.Հովսեփյանին և մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովման վարչության պետ Կ.Դովլաթբեկյանին:

9.Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

ք. Իջևան
29 մարտի 2013թ